ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հունվարի 2021 թվականի №---Ա

քաղ. Երևան

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության 2020 թվականի դեկտեմբերի 4-ի №12/4161 գրությունը, որի համաձայն՝ «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) դիլեր հանդիսացող «ԷՐ և ԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Դիլեր) կողմից հանրային շարժական բջջային կապի հեռախոսաքարտերի վաճառքի ընթացքում խախտվել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2011 թվականի հունիսի 8-ի «Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շարժական բջջային կապի կանխավճարային և հետվճարային հեռախոսաքարտերի տրամադրման պայմանագրերի արխիվների պահպանման ստանդարտներ սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №285Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) պահանջները,

բ) որ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, 2020 թվականի դեկտեմբերի 7-ից վարչական վարույթ է հարուցել Ընկերության նկատմամբ՝ Որոշման պահանջների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

գ) որ Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում 2020 թվականի դեկտեմբերի 15-ին Հանձնաժողով ներկայացված №00405/20-И11 գրությամբ հայտնել է դիրքորոշում այն մասին, որ Դիլերի հետ 2017 թվականի փետրվարի 14-ին կնքված պայմանագրի համաձայն վերջինս պարտավորվում է Ընկերության հանձնարարությամբ և անունից Հայաստանի Հանրապետության տարածքում կատարել իրավաբանական և/կամ այդ պայմանագրով նախատեսված այլ գործողություններ, ներառյալ՝ հանրային շարժական

բջջային կապի հեռախոսաքարտերի փոխանցում բաժանորդներին, դրանց ձևակերպումների հետ կապված գործառույթներ: Պայմանագրով ամրագրված է նաև, որ քարտերի իրացումից հետո 3 օրվա ընթացքում դիլերն իրեն տրամադրված համակարգի կիրառմամբ պայմանագրի էլեկտրոնային տարբերակը կից փաստաթղթերով ուղարկում է Ընկերության սերվերին՝ փաստացի ապահովելով Որոշմամբ սահմանված ժամկետները, սակայն կորոնավիրուսի համավարակի տարածման հետ կապված հայտարարված արտակարգ դրությամբ, ինչպես նաև սեպտեմբերյան պատերազմով պայմանավորված, որն ըստ էության դասական ֆորս մաժորային իրավիճակ է, գործընկեր կազմակերպության կողմից պայմանագրային պարտավորություններն առանձին դեպքերում, Դիլերի կողմից իրացված հանրային շարժական բջջային կապի հեռախոսաքարտերի գրանցումները կատարվել են որոշակի ուշացումներով, քանի որ վերջինիս պնդմամբ, Բագրատաշենի վաճառակետի իր հետ համագործակցող աշխատակիցը (երը) եղել է պատերազմի առաջնագծում, արդյունքում տվյալները սահմանված ժամանակին չեն փոխանցվել Դիլերին և չեն մուտքագրվել համապատասխան համակարգ: Արտակարգ դրության պայմաններում հանրային շարժական բջջային կապի հեռախոսաքարտերի վերջին խմբաքանակը Դիլերին տրամադրվել է 2020 թվականի սեպտեմբերի 3-ին, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության գրության մեջ նշված հանրային շարժական բջջային կապի 099 984536, 099 984513, 099 984484, 099 984482, 099 984480, 099 984478, 099 984479 հեռախոսաքարտերը, որոնցից 4-ը (099 984536, 099 984484, 099 984478 և 099 984479) ակտիվացվել են սեպտեմբերի վերջին և գրանցման ժամկետները համընկնում են հենց պատերազմական (ֆորս մաժորային) ժամանակաշրջանին, ընդ որում՝ 099 984479 համարի գրանցման ժամկետը խախտվել է մեկ աշխատանքային օրով, իսկ մյուս երեք համարները վաճառվել են հոկտեմբերի 3-ին, այդ համարներից որևէ զանգ, հաղորդագրություն չի ուղարկվել և արդեն իսկ հոկտեմբերի 4-ին արգելափակվել են՝ հաշվի առնելով, որ երկրում ստեղծված պատերազմական իրավիճակում դիլերների կողմից վաճառքի առանձին տարածքներում, այդ թվում Բագրատաշենում, սկսել են ի հայտ գալ որոշակի խնդիրներ (ռիսկեր), ուստի Ընկերությունը հոկտեմբերի 4-ին որոշում է կայացրել Բագրատաշենում գործունեություն իրականացնող Դիլերին տրամադրված խմբաքանակից ավելի քան 600 հանրային շարժական բջջային կապի հեռախոսաքարտեր, այդ թվում՝ 099 984478, 099 984480 և 099 984513 հեռախոսաքարտերը ոչնչացնել: Այսինքն, Ընկերությունն անմիջապես ձեռնարկել է անհրաժեշտ բոլոր միջոցներն ինչպես իր ռիսկերը, այնպես էլ Որոշման պահանջների հնարավոր խախտումները բացառելու ուղղությամբ: Ընկերությունը խնդրել է Հանձնաժողովին վարույթի քննարկման ընթացքում հաշվի առնել նաև երկրում ստեղծված

ֆորս մաժորային իրավիճակը, որի պայմաններում գրեթե անհնարին է դարձել տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների բնականոն աշխատանքը,

դ) ի պատասխան Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 21-ի №ԳԲ/34.2-Մ2-10/5010-2020 գրության Ընկերության 2020 թվականի դեկտեմբերի 23-ի №0433/20-И11 գրությունը, որով վերջինս Հանձնաժողով է ներկայացրել Դիլերի հետ կնքված պայմանագրի և հանրային շարժական բջջային կապի 099 984536, 099 984484, 099 984478 և 099 984479 հեռախոսաքարտերի տրամադրման պայմանագրերի պատճենները, ինչպես նաև հայտնել, որ 099 984478, 099 984480 և 099 984513 հեռախոսահամարների մասով համապատասխան պայմանագրեր առկա չեն, քանի որ դրանք ներառված են եղել խնդրահարույց համարների ցանկում,

ե) Որոշման 1-ին կետը, որի համաձայն՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շարժական բջջային կապի ծառայություններ մատուցողները հանրային շարժական բջջային կապի հեռախոսաքարտերի տրամադրման պայմանագրերի կնքման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում սկսում են վարել փաստաթղթային և էլեկտրոնային կամ միայն էլեկտրոնային բազա, որը ներառում է պայմանագրի տեսաներածված պատճենը կամ էլեկտրոնային բնօրինակը, եթե պայմանագիրը կնքվել է էլեկտրոնային եղանակով՝ օպերատորի գործառնական գրասենյակում և

զ) Որոշման 6-րդ կետը, որի համաձայն՝ հանրային շարժական բջջային կապի հեռախոսաքարտերի տրամադրման պայմանագրերի կնքման և կատարման կարգի, ինչպես նաև Որոշման 1-5-րդ կետերի պահանջների պահպանման (այդ թվում՝ ծրագրային, տեխնիկական և այլ միջոցների ապահովումը) պատասխանատվությունը կրում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շարժական բջջային կապի ծառայություններ մատուցողը (տվյալ դեպքում՝ Ընկերությունը),

է) Հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի №341Ն որոշմամբ տրամադրված №60 լիցենզիայի պայմանները (այսուհետ՝ Լիցենզիա), որի համաձայն՝ ֆորս մաժորը դա արտակարգ և անկանխելի դեպքերն ու հանգամանքներն են, որոնք ստեղծվել են լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են լիցենզավորված անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության

կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը,

ը) Լիցենզիայի 5.1 կետը, որի համաձայն՝ Ընկերության գործունեությունը պետք է համապատասխանի «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Լիցենզավորման մասին» օրենքների, այլ օրենքների, Լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին,

թ) Լիցենզիայի 5.25 կետը, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտման,

ժ) Լիցենզիայի 8.2 կետը, որի համաձայն՝ Ընկերությունը չի ենթարկվում պատասխանատվության, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները ֆորս մաժորի հետևանք են,

ժա) որ Ընկերությունը 099 984536 հեռախոսաքարտի մասով պայմանագիր է կնքել 2020 թվականի սեպտեմբերի 26-ին (իսկ բազան վարել 2020 թվականի հոկտեմբերի 4-ին), 099 984484 մասով՝ 2020 թվականի սեպտեմբերի 23-ին (իսկ բազան վարել 2020 թվականի նոյեմբերի 7-ին), 099 984478 մասով՝ 2020 թվականի սեպտեմբերի 28-ին (իսկ բազան վարել 2020 թվականի նոյեմբերի 7-ին), 099 984479 մասով՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին (իսկ բազան վարել 2020 թվականի հոկտեմբերի 4-ին, ընդ որում, նշված համարը ակտիվացվել է 2020 թվականի սեպտեմբերի 25-ին), իսկ 099 984478, 099 984480 և 099 984513 հեռախոսահամարները վաճառվել են հոկտեմբերի 3-ին, սակայն դրանց մասով համապատասխան պայմանագրեր առկա չեն,

ժբ) որ հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Որոշման 1-ին կետի պահանջները՝ հանրային շարժական բջջային կապի հեռախոսաքարտերի տրամադրման պայմանագրերի բազայի վարումը չի իրականացրել պայմանագրերի կնքման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ թվով 3 հեռախոսահամարների մասով հեռախոսաքարտերի տրամադրման պայմանագրեր առկա չեն: Ինչ վերաբերում է Ընկերության ներկայացրած՝ ֆորս մաժորային իրավիճակին վերաբերող դիտարկումներին, ապա Ընկերության ներկայացրած փաստաթղթերով չի հիմնավորվել, որ նշված պարտավորությունների չկատարումը հետևանք է ֆորս մաժորի, այն է, առկա են եղել անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք առաջացել են իր կողմից անկախ, խոչընդոտել են իր գործունեությանը կամ հանգեցրել համապատասխան պարտավորությունների կատարմանը՝ հակառակ իր կողմից գործադրված ջանքերի, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի

43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Ընդ որում, Ընկերությունը դրա վերաբերյալ հնարավորինս սեղմ ժամկետում չի տեղեկացրել Հանձնաժողովին, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժբ» ենթակետը, 54-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը, 63-րդ հոդվածի 4-րդ մասը և Որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշման 1-ին կետը խախտելու համար Ընկերությանը տուգանել մեկ միլիոն (1 000 000) ՀՀ դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը՝

   1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից 30-օրյա ժամկետում №900005242319 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետով սահմանված տուգանքը,

   2) մինչև 2021 թվականի փետրվարի 1-ը Հանձնաժողով ներկայացնել Որոշման պահանջների հետագա հնարավոր խախտումները բացառելու ուղղությամբ ձեռնարկվելիք գործողությունների վերաբերյալ առաջարկություններ:
3. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է՝

   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու իր որոշումը.

   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- հունվարի 2021թ.